Գլխավոր տեղեկություն	
Համար	N 142-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (14.02.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2025.02.03-2025.02.16 Պաշտոնական հրապարակման օրը 13.02.2025
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	13.02.2025
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	13.02.2025
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	14.02.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2025 թվականի N 142-Ն

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ5.» ենթակետը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 123-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և նույն մասի երկրորդ պարբերության կիրառության առումով՝ նաև 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

13.02.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 13-ի N 142-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Կոդը	Գործունեության տեսակի անվանումը
C26.11.0	Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն
C26.12.0	Հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրություն
C26.20.0	Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրություն
C26.30.0	Կապի սարքավորանքի արտադրություն
C26.40.0	Կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն
C26.51.0	Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն
C26.60.0	Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն
C26.70.0	Օպտիկական գործիքների և լուսանկարչական սարքավորանքի արտադրություն
C26.80.0	Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն
C28.11.0	Շարժիչների և տուրբինների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական, արտադրություն
C28.12.0	Հիդրավլիկական սարքավորանքի արտադրություն
C28.99.0	Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում
C29.31.0	Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար էլեկտրական և էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն
C30.30.1	Օդանավերի և տիեզերանավերի արտադրություն
C30.30.2	Այլ թռչող սարքերի արտադրություն
C30.30.9	Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող սարքերի համար մասերի արտադրություն
C30.40.0	Մարտական մեքենաների արտադրություն
J58.21.0	Համակարգչային խաղերի հրատարակություն
J58.29.0	Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն
J62.01.0	Ծրագրային ապահովման մշակում
J62.02.1	Էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և մշակում
J62.02.9	Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում՝ չներառված ուրիշ խմբավորումներում
J62.03.0	Համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն
J62.09.0	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն
J63.11.1	Տվյալների հիմնապաշարների և տեղեկատվական ռեսուրսների մշակում և կիրառում
J63.11.3	Օպերատիվ ռեժիմում ծրագրային ապահովմանն առնչվող սպասարկման ծառայությունները՝ կիրառական ծրագրերի և համակարգային ծրագրային ու տեխնիկական միջոցների սպասարկում
J63.12.0	Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ
M71.12.5	Ինտեգրալային սխեմաների նախագծում և թեստավորում
M72.11.0	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կենսատեխնոլոգիաների բնագավառում
M72.19.1	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական գիտությունների բնագավառում
M72.19.2	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ տեխնիկական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառում

M72.20.0	Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

13.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 13 փետրվարի 2025 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան